ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ 1920–1930-ԱԿԱՆ ԹԹ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային կարգերի հաստատմամբ հասարակական-քաղաքական ու ընկերային-տնտեսական կյանքը, մշակույթը, կենցաղը բացառնականապես կուսակցականացվեցին: Ամեն ինչ՝ այդ թվում եւ բնակչության հոգեւոր բաղադրիչը, ստորադասվեց ու ծառայեցվեց կոմունիստական կուսակցության եւ խորհրդային իշխանության մենաշնորհ համակարգի հաստատմանը: Դրան հակառակվող կամ առնվազն չաղերսվող ցանկացած կրոնական-աշխարհիկ գաղափարախոսություն պարզապես նույնականացվեց ու հավասարեցվեց հակահեղափոխական-հակախորհրդայինի: Այս պարագան լիովին վերաբերում էր նաեւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ գահակալով, կառույցներով, ծիսակարգով:

Ըստ այդմ՝ հենց 1920–1930-ական թվականներին ծայրահեղ բացասական էր ՀԱԵ հանդեպ կոմկուսի որդեգրած քաղաքականությունը: Խորհրդային իշխանության եւ նրա ղեկավար կոմկուսի ամբողջատիրական համակարգ հաստատելու ճանապարհին կրոնը եւ եկեղեցին դիտարկվում էին որպես գաղափարախոսության ասպարեզում կոմկուսի մենատիրության խոչընդոտներից մեկը:

Շեփորահարելով պետությունից եկեղեցու անջատման կեղծ դրույթը՝ կոմկուսը միանգամայն հակառակ ուղեգիծ վարեց. հնարավորինս չեզոքացնել, քայքայել, անգամ լուծարել ՀԱԵ-ն՝ այդ նպատակով կուսակցական-խորհրդային ու վարչական տարաբնույթ վերահսկիչ ու պատժիչ մարմիններ ստեղծելով: Արդյունքում արդեն 1938 թ. Մայր Աթոռում մնացել էր ընդամենը... 7 հոգեւորական, այն էլ՝ բոնի մեկուսացված, ծայրահեղ վատառողջ, առանց Վեհափառի:

Թեեւ կոմկուսի գաղափարախոսական պայքարում հակակրոնական բաղկացուցիչն ուներ առաջնահերթ դերակատարություն, այդուհանդերձ հետագա տարիներին, նաեւ առարկայական դրդապատճառներից ելնելով, խորհրդային իշխանություններն ստիպված եղան մեղմացնել ՀԱԵ նկատ-

մամբ իրենց դիրքորոշումը: Կյանքն ապացուցեց կոմկուսի կրոնաեկեղեցական հաղաքականության սնանկությունը. ՀԱԵ-ն չվերացավ, Խորհրդային Հայաստանի բնակիչները համատարած աթեիստներ չդարձան: Ավելին. անգամ ԽՍՀՄ խիստ միակարծության պայմաններում ՀԱԵ-ն շարունակեց մնալ այն միակ ըստ օրինի գործող կառույցը, որի գաղափարախոսությունն էապես տարբերվում էր կոմկուսի պաշտոնական գաղափարախոսությունից:

Փաստաթղթերը հրատարակվում են առաջին անգամ՝ ռուսերենից թարգմանությամբ, դրանք խորհրդային շրջանում կրել են «Գաղտնի», «Հույժ գաղտնի», «Հատկապես գաղտնի» նշագրումներ: Պահպանվել են առկա բազմաթիվ սխալները, անձանց եւ տեղանունների տարընթերցումները ու գրելաձեւերը, եւ հրատարակվում են բնագրային նույնությամբ, ժամանակագրական դասավորությամբ: Անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղղում-լրացումներ:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի ղեկավար մարմինների՝ նախագահության (բյուրոյի) եւ քարտուղարության արձանագրությունները, պարունակելով բավականին ուշագրավ եւ հետաքրքիր տեղեկատվություն ՀԱԵ ու կրոնական հարցերի նկատմամբ կոմկուսի վարած քաղաքականության վերաբերյալ, կարեւորագույն սկզբնաղբյուր են հիմնահարցի առարկայական պատկերացման ու ընկալման տեսանկյունից:

Թիվ 1
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

ՀԿ(բ)Կ ԿԿ[1] նիստի, 12 մայիս 1921 թվական

Լսեցին՝

1. Մակինցյանը[2] զեկուցում է էջմիածնի պատվիրակության ներկայացրած զեկուցագրի մասին՝ Հայ եկեղեցու, մասնավորապես՝ էջմիածնի վանքի իրավունքների եւ ազատության մասին։

Որոշեցին՝

Ըստ էության չքննարկել, հանձնարարել Մակինցյանին եւ Ազատյանին[3] ԿԿ առաջիկա նիստին կաթողիկոսի ներկայացուցիչների առաջ քաշած հարցերին հստակ պատասխաններ ներկայացնել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 4։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 2
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

ՀԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի նիստի, 6 հունիս ս.թ. [1921 թ.]

Լսեցին՝

3. Էջմիածնի մասին։

Որոշեցին՝

Թողնել այն քանակի հող, որը մշակվում է վանականների կողմից։ Մշակութային հիմնարկությունների ազգայնացման մասին դեկրետը[4] թողնել ուժի մեջ։ Պահեստները խլել, եթե պարզվի, որ դրանցում կան որոշակի քանակից ավելի սննդամթերք։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 16։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

---

[1] Հայաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցություն, Կենտրոնական կոմիտե։

[2] Մակինցյան Պողոս (1884–1938)։ *1921 թ. եղել է ՀԽՍՀ ներքին գործերի, ապա՝ լուսավորության ժողկոմ։ Հետագայում ունեցել է դիվանագիտական ու գիտական աշխատանք։ Բռնադատվել է, գնդակահարվել։*

[3] Ազատյան Հայկ (1881–1964)։ *ՀԽՍՀ արհմիությունների 1-ին ղեկավար, 1924–1928 թթ.՝ ՀԽՍՀ ԿԳԿ փոխնախագահ, ապա անցել է գիտադասախոսական աշխատանքների։*

[4] *1920 թ. դեկտեմբերի 17-ին Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը եւ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը ընդունեցին «Հոգեւոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունների պետականացման մասին» դեկրետը, որով «ՀԽՍՀ գտնված բոլոր հոգեւոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոց, թանգարան, մատենադարան ու տպարան) շարժական եւ անշարժ գույքով համարվում են պետական սեփականություն եւ փոխանցվում են Լուսավորության ժողկոմատի տնօրինության»։ Տես ՀԽՍՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պր. 1, էջմիածին, 1921, էջ 16։*

Թիվ 3
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության[5] նիստի, 8 ապրիլ 1922 թ.

Լսեցին՝

7. Անդրերկրկոմի[6] շրջաբերական նամակը եկեղեցական գանձերի բռնագրավման մասին։

Որոշեցին՝

Եկեղեցական գանձերի բռնագրավման որոշումը չկիրառել Հայաստանում, դրանց չլինելու պատճառով։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 11։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 4
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 18 ապրիլ [19]22 թ.

Լսեցին՝

2. Հայաստանում եկեղեցական քաղաքականության ղեկավար նշանակելու մասին։

Որոշեցին՝

Եկեղեցական քաղաքականության ղեկավար նշանակել Լուկաշինին[7], հաղորդել ՌԿԿ[8] ԿԿ-ին։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 14։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 5
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №18

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության[9] նիստի, 10 մայիս [19]22 թ.

Լսեցին՝

3. Էջմիածնի մատենադարանի (վանքի) գույքի մասին։

---

[5] Նախագահություն — *կենտկոմի կազմից ընտրված բարձրագույն մարմին, հետագայում վերանվանվեց Բյուրոյի։*

[6] Կոմկուսի Անդրկովկասյան երկրամասային կոմիտե — *Անդրկովկասի վերադաս կուսակցական մարմին։*

[7] Լուկաշին (Սրապիոնյան) Սարգիս (1883–1937)։ *1921–1922 թթ.՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1922–1925 թթ.՝ ՀԽՍՀ ԺԿԽ նախագահ։ Ռոնադատվել է, գնդակահարվել։*

[8] Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն։

[9] *Քարտուղարությունը, ԿԿ Նախագահությանը զուգահեռ, ավելի նեղ կազմով մարմին էր։*

Որոշեցին՝

Գույքը թողնել Երեւանում մինչեւ հարցի վերջնական լուծումը ՀԿ(բ) Կ ԿԿ պլենումի կողմից։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 7, թ. 21։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 6
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №23

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 25 մայիս 1922 թ.

Լսեցին՝

1. Էջմիածնի գրադարանի՝ այժմ գիտական ինստիտուտի[10], ձեռագրերի եւ այլ գանձերի պահպանման վայրի ընտրության եւ Հայաստանի Ժողկոմխորհի ներկայացուցչի՝ Էջմիածնի վանքին առընթեր եւ Էջմիածնի գավգործկոմի[11] նախագահի միջամտության մասին Լուսժկ[12] կարգադրության վերաբերյալ։

Որոշեցին՝

Նշյալ ձեռագրերի պահպանման վայր ընտրել ք. Երեւանը եւ առաջարկել Էջմիածնի պատասխանատու ընկերներին չխառնվել Լուսժողկոմատի գործերին։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 28։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 7
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №57

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 23/Ի-[19]23 թ.

Լսեցին՝

21. Լուկաշինի հաղորդումը հոգեւորականության մասին։

Որոշեցին՝

Համարել անհետաձգելի եւ անհրաժեշտ հետեւյալ միջոցառումների իրականացումը.

Ա. Եկեղեցական եւ վանքապատկան հողերի բռնագրավում,

Բ. Էջմիածնի ազգային[13] թանգարանի ազգայնացում,

---

[10] 1921 թ. Էջմիածնում հիմնվեց Պատմամշակութային ինստիտուտ, որը վերափոխվեց Գիտության եւ արվեստի ինստիտուտի (հետագայում՝ «Արմֆան», ապա՝ ՀԽՍՀ ԳԱ)։

[11] Գավառային գործադիր կոմիտե — գավառային տեղական կառավարման խորհրդային մարմին։

[12] Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ։

[13] Բնագրում ռուսերեն այսպես է։

Գ. Գրիգոր Վարդանյանին[14] հետևանչում։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 2։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 8

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №58

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 30/I-[19]23 թ.

Լսեցին՝

14. Հակակրոնական քարոզչության դրվածքի մասին։

Որոշեցին՝

Անհրաժեշտ համարել գավառներում անկուսակցական զանգվածների շրջանում հակակրոնական քարոզչության ուժեղացումը։ ԿԿ Ագիտբաժնին՝[15] հաջորդ նիստին ներկայացնել աշխատանքի նախագիծ հակակրոնական քարոզչության դրվածքի մասին։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 4։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 9

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №60

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 6/II-[19]23 թ.

Լսեցին՝

13. Էջմիածնում հակակրոնական քարոզչության իրականացման մասին։

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 7։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 10

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 4/IV-[19]23 թ.

Լսեցին՝

8. Լուկաշինի առաջարկը հակակրոնական ագիտացիայի ակնառու ձեւերի առաջադրման անհրաժեշտության մասին։

---

[14] Վարդանյան Գրիգոր (1868–1938)։ *եկեղեցական գործերով ՀԽՍՀ ԺԿԽ ներկայացուցիչ, 1924-ից Հայաստանի օգնության կոմիտեի քարտուղար, վարչության նախագահ։ Բռնադատվել է, գնդակահարվել։*

[15] Ագիտացիոն բաժին — *քաղաքական քարոզչության աշխատանքները համակարգող ստորաբաժանում։*

Որոշեցին՝

Առաջարկել Իոանիսյանին[16] առաջիկա նիստին հայկական եկեղեցու առանձնահատկություններին համապատասխան կոնկրետ առաջարկ ներկայացնել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 14։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 11
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 22/VI-[19]23 թ.

Լսեցին՝

3. Հոգեւորականների նկատմամբ վերաբերմունքի մասին (Իոանիսյան)։

Որոշեցին՝

Ա. Անհրաժեշտ համարել կուսակցության աշխուժ աշխատանքն եկեղեցու բարենորգչական[17] շարժման վրա ազդելու ուղղությամբ, որի համար անհրաժեշտ ճանաչել բարենորոգման կողմնակիցներից մի քանի խմբերի առանձնացումը՝ նրանց փոփոխուն օգտագործման համար։

Բ. Թույլատրել նշյալ խմբերին թերթերի հրատարակություն[18],

Գ. Եկեղեցու բարենորոգիչների հետ բանակցությունների վարումը հանձնարարել Ա. Երզնկյանին[19], գործընթացի ընդհանուր ղեկավարումը դնելով Ա. Իոանիսյանի վրա։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 25։ Բնագիր։ Մեքենագիր։
Թարգմ. ռուս.։

---

[16] Հովհաննիսյան Աշոտ (1887–1972)։ *1914–1917 թթ. դասավանդել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, 1920–1921 թթ. եղել է ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ, 1922–1927 թթ.՝ ՀԿ(բ)Կ ԿԿ գլխավոր քարտուղար։ 1937–1943 թթ. բռնադատվել է։ Հայագիտական արժեքավոր գործերից զատ՝ Հաե դեմ ուղղված բազմաթիվ հրապարակումների հեղինակ է։ Փաստաթղթերում միշտ նշվել է «Իոանիսյան» ձեւով։*

[17] *Նկատի ունի այսպես կոչված «ազատ եկեղեցական» շարժումը։*

[18] *Թերթերից հայտնի է հետեւյալը. «Ազատ եկեղեցի» – կրոնաբարոյական եւ պատմագրական շաբաթաթերթ, Երեւանի «Ազատ-եկեղեցական եղբայրության» պաշտոնաթերթ, Երեւան, 1924–1928, 24 էջ։ Խմբագիր-հրատարակիչ, պատասխանատու խմբագիր Մեսրոպ ավագ քահանա Մելյան։ Այլ թերթեր չեն հրատարակվել։*

[19] Երզնկյան Առամայիս (1879–1937)։ *Եղել է ՀԽՍՀ Հողժողկոմ, ԺԿԽ նախագահի տեղակալ, Երեւանի քաղխորհրդի գործկոմի նախագահ։ Բռնադատվել է, գնդակահարվել։*

Թիվ 12
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №16

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 7/VIII-[19]23 թ.

Լսեցին՝

3. Պետական թանգարանի ձեռագրերի էջմիածին տեղափոխման մասին (Մռավյան[20])։

Որոշեցին՝

Թույլատրել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 31։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 13
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №14

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 25/VIII-[19]23 թ.

Լսեցին՝

1. Կեղծված փաստաթղթերով եկեղեցական սեփականության վաճառքի գործը[21]։

Որոշեցին՝

Հանցագործության մեջ խառնված անձանց դատել եւ Աշոտ եպիսկոպոսին[22] ներգրավել որպես վկա։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 9, թ. 35։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 14
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №20

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 10/IX-[19]23 թ.

Լսեցին՝

11. Եկեղեցու բարեկործիչների հետ բանակցությունների վարման մասին (Իոանիսյան)

---

[20] Մռավյան Ասաթուր (1885–1929)։ *1921–1923 թթ.՝ ՀԽՍՀ արտաքին գործերի, 1923–1929 թթ.՝ լուսավորության ժողկոմ, «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր։*

[21] *Հավանաբար տեղի է ունեցել Շիրակի թեմում, պարզել չհաջողվեց։*

[22] Աշոտ եպիսկոպոս Շախյան։ *1922–1924 թթ. եղել է Շիրակի թեմի առաջնորդ։ «Ազատ եկեղեցական» շարժման համախոհ, Մայր Աթոռի դեմ գրքույկների հեղինակ։ Կարգալույծ է արվել։ Մահացել է 1926 թ.։*

Որոշեցին՝

Եկեղեցու բարենորոգիչների հետ բանակցություններ վարելը, որ դրված էր Ա. Երզնկյանի վրա, հանձնարարել Գ. Վարդանյանին եւ առաջարկել վերջինիս անմիջապես մեկնել Մոսկվայից։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 36ա։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 15
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №21

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 17/IX-[19]23 թ.

Լսեցին՝

9. Էջմիածնի գավառում հոգեւորականությունից բռնագրավված հողերի մասին։

Որոշեցին՝

Քննարկումից հանել եւ ուղարկել [Էջմիածնի] հողբաժվարի տեղակալ Սողոմոնյանի դիմումը Էջմգավկոմ[23], եւ հայտարարել նկատողություն առանց գավկոմում նախնական քննարկման այդ կարեւոր հարցով անմիջապես ԿԿ-ին դիմելու համար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 40։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 16
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №16

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 22/IX-[19]23 թ.

Լսեցին՝

3. Կոմերիտական ակումբին հատկացված Քեշիշքենդի[24] եկեղեցու վերականգնման մասին։

Որոշեցին՝

Առաջարկել ՀԿ(բ)Կ Դարգավկոմին[25] եկեղեցու վերանորոգման նախահաշիվը ներկայացնել Գլխքաղլուսին[26]։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 9, թ. 39։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

---

[23] Էջմիածնի գավառային կոմիտե — *կոմկուսի տարածքային մարմին։*

[24] *Այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի եղեգնաձոր քաղաքը։ Հավանաբար խոսքը Ս. Սարգիս եկեղեցու մասին է։*

[25] Դարալագյազի (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզ) գավառային կոմիտե։

[26] *Գլխավոր քաղաքական լուսավորություն — քաղաքական քարոզչության միավոված խորհրդային մարմին։*

Թիվ 17
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №35

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 10/Ի-[19]24 թ.

Լսեցին՝

5. Թավրիզի եպիսկոպոս Մելիք–Թանգյանի մասին (Իոանիսյան)։

Որոշեցին՝

Մելիք–Թանգյանին Պարսկաստանից հետկանչի մասին ԿԿ Նախագահության որոշումը թողնել ուժի մեջ։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 4։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 18
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №40

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 22/ԻԻ-[19]24 թ.

Լսեցին՝

4. Հոգեւորականության քայքայման մասին (Վարդանյան)։

Որոշեցին՝

Առաջարկել Հայաստանի ԱՀ-ին[27] արտասահմանից ՄՊՔվ[28] միջոցով նախկին վարդապետ Աբել Նազարյանին[29] կանչել՝ Հայաստանում հոգեւորականության քայքայման գծով աշխատելու համար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 12։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 19
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №36

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 22/ԻՎ-[19]24 թ.

Լսեցին՝

14. Ակումբ դարձված Ալավերդու խլված եկեղեցու սարքավորման ծախսերի մասին։

---

[27] Արտակարգ հանձնաժողով — *անվտանգության մարմին՝ հայտնի ռուսերեն Չեկա հապավմամբ։*

[28] Միացյալ պետական բաղաքական վարչություն — *ԽՍՀՄ պետանվտանգության նախարարությունը։*

[29] Աբել Նազարյան։ *Նախկին ծ. վարդապետ։ 1919–1923 թթ. Լոնդոնի հոգեւոր հովիվ։ Հրաժարվել է հոգեւոր կոչումից, ապա՝ ապաշխարել։ Մայր Աթոռի դեմ ուղղված գրքույկներ է հրատարակել։*

Որոշեցին՝

Առաջարկել ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի գավկոմին ստանձնել խլման աշխատանքի ղեկավարումը եւ գավգործկոմի, ինչպես նաեւ՝ տեղական համապատասխան մարմինների միջոցով, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ գումարը հայթայթելու համար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 12, թ. 26ա։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 20
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №49

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 30/IV-[19]24 թ.

Լսեցին՝

3. Հայ-Գրիգորյան[30] հոգեւորականության համագումարի հրավիրման մասին (Ամիրխանյան[31])։

Որոշեցին՝

Հանձնարարել Գ. Վարդանյանին պարզել, թե արդյոք հոգեւորականությունը համագումարի նախապատրաստական աշխատանքներ տանում է եւ ինչու խորհրդային աշխատակարգով թույլտվություն չի հարցվել։ Մնացյալում առաջարկել նրան ղեկավարվել հարցի առթիվ ԿԿ նախկին որոշումներով։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 31։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 21
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №32

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 22/XII-[19]24 թ.

Լսեցին՝

6. Հաղպատ եւ Սանահին գյուղերի եկեղեցիների պահպանության հաստատման անհրաժեշտության մասին՝ նկատի ունենալով դրանց պատմական արժեքը (ՀԿ(բ)Կ Փամբակ-Լոռու գավկոմի որոշում, 9/XII-[19]24)։

---

[30] *Այս տարիներին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին գրեթե միշտ այսպես է անվանվել, հավանաբար՝ ցարական ժամանակների ձեւակերպման ազդեցությամբ։*

[31] Ամիրխանյան Շավարշ (1894–1959)։ *1921–1926 թթ.՝ ՀԽՍՀ արտակարգ հանձնաժողովի նախագահ, 1926–1929 թթ.՝ կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, բանվորագյուղացիական տեսչության ժողկոմ։*

Որոշեցին՝

Հանձնարարել Լուսժողկոմատին պարզաբանել հարցը եւ պահպանության հաստատման անհրաժեշտության դեպքում ընդունել համապատասխան միջոցներ։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 77։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 22
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №36

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 3/II-[19]25 թ.

Լսեցին՝

10. Ակումբ դարձված Քեշիշքենդի եկեղեցին հավատացյալներին վերադարձնելու մասին (Մելիք-Օսիպով[32])։

Որոշեցին՝

Ղեկավարվել այդ հարցի մասին գոյություն ունեցող դրույթով։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 7։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 23
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №43

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 6/IV-[19]25 թ.

Լսեցին՝

13. Հանգստի տոնական օրերի մասին (ՌԿԿ Անդրկկ նախագահություն, №30/7բ)։

Որոշեցին՝

Բացի եղած հեղափոխական տոների՝ հայտարարել հանգստի տոնական օրեր հետեւյալ օրերը. 1. Մնունդ — 6/I, 2. Զատկի 2-րդ օրը — 13 ապրիլի, 3. Համբարձում — 21/V, 4. Վարդավառի[33] 2-րդ օրը — 20/VII, 5. Պայծառակերպության 2-րդ օրը — 17/VI, 6. Խաչվերացի (Սուրբ խաչ)[34] 2-րդ օրը — 14/IX։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 17ա։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

---

[32] Մելիք-Օսիպով Սերգեյ (1882–1938)։ *1924–1928 թթ.՝ ՀԽՍՀ ԱՀ նախագահ։ Բռնադատվել է, գնդակահարվել։*

[33] *Բնագրում ռուսերեն գրված՝* Вартавар։

[34] *Բնագրում ռուսերեն գրված՝* Хачверац (Сурб Хач)։

ԹԻՎ 24
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №54

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 15/IX-[19]25 թ.

Լսեցին՝

2. Կաթողիկոսարանին կից ԺԿԽ[35] ներկայացուցչի մասին (Համբարձումյան[36])։

Որոշեցին՝

Առաջադրել Ա. Երզնկյանին Հայաստանի ԺԿԽ ներկայացուցիչ Հայ-Գրիգորյան եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականության հետ հարաբերվելու գծով։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 32։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 25
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 21/XII-[19]25 թ.

Լսեցին՝

1. Հավատացյալների համայնքների եւ նրանց գրանցման կարգի մասին կանոնակարգը (Մռավյան եւ Վարդապետյան[37])։

Որոշեցին՝

Ընդունել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 47։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 26
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 5 հունվար 1926 թ.

Լսեցին՝

1. Նախկինում Հայ-Գրիգորյան եկեղեցուն պատկանող արտասահմանյան սեփականության մասին (ԽՍՀՄ ԿԳԿ[38] գրություն) (Կարինյան[39])։

---

[35] Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ *ԺԿԽ — 1920–1940-ական թվականների կառավարությունը։*

[36] Համբարձումյան Սարգիս (1870–1944)։ *1921–1928 թթ.՝ ՀԽՍՀ առողջապահության ժողկոմ։*

[37] *Լ. Վարդապետյանը ՀԽՍՀ արդարադատության ժողկոմն էր։*

[38] Կենտրոնական գործադիր կոմիտե — *1920–1930-ական թվականներին օրենսդիր մարմին։*

[39] Կարինյան Արտաշես (1886–1982)։ *1921 թ.՝ ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ, 1924–1928 թթ.՝ ՀԽՍՀ ԿԳԿ նախագահ, ակադեմիկոս։ ՀԱԵ դեմ ուղղված բազմաթիվ հրապարակումների հեղինակ է։*

Որոշեցին՝

Հանձնարարել ընկ[եր] Երզնկյանին բացահայտել այն սեփականությունները, որոնց մասին հոգում է կաթողիկոսը եւ որոնք արտասահմանում տնօրինում էր Հայ-Գրիգորյան եկեղեցին, ինչպես նաեւ այն ժառանգական կտակումները, որոնք պետք է ստացվեն հայ ժողովրդի օգտին կաթողիկոսի միջոցով, եւ զեկուցել ԿԿ-ին։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ.6, թ. 1: Բնագիր: մեքենագիր: Թարգմ. ռուս.:

Թիվ 27
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 22/II-[19]26 թ.

Լսեցին՝

5. Մելիքգյուղ գյուղի[40] եկեղեցին հասարակական օգտագործման (գյուղխորհրդի գրասենյակի) հանձնելու մասին (ՀԿ(բ)Կ Իջեւանի շրջկոմի որոշում)։

Որոշեցին՝

Ուղարկել Դիլիջանի գավկոմին հարցի առթիվ ծանրակշիռ նկատառումներ ներկայացնելու համար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ.12, թ. 11: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

Թիվ 28
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 3/III-1926 թ.

Լսեցին՝

4. Աղոթատների եւ եկեղեցիների ապահովագրության մասին (Համբարձումյան)։

Նկատի ունենալով հավատացյալների համայնքների իրավաբանական ձեւակերպման բացակայությունը եւ Հայաստանում ապահովագրության երկու տեսակի (կարկտահարություն, ժանտախտ) առկայությունը, ինչպես նաեւ՝ հրդեհներից (քաղաքներում), առանց հարկադրույքի աղոթատների եւ եկեղեցիների պարտադիր ապահովագրությունը ճանաչել վաղաժամ։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ.6, թ. 14ա: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

---

[40] Գյուղ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի շրջանում։

ԹԻՎ 29
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №16

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 28/IV-[19]26 թ.

Լսեցին՝

1. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի մասին (Մռավյան)։

Որոշեցին՝

Ա. Բացատրել կաթողիկոսարանին, որ Էջմիածնի հոգեւոր ակադեմիան՝ հավասարապես ինչպես եւ բոլոր հոգեւոր սեմինարիաները, համարվում են լուծարված եւ ինչ նոր ձեւով ուզում է լինի՝ վերականգնման ենթակա չեն։

Բ. Հոգեւոր անձանց պատրաստման համար թույլատրել Էջմիածնին ունենալ հոգեւոր դպրոց մեծահասակների համար, պետությունից եկեղեցու անջատման մասին խորհրդ[ային] կառավարության դեկրետի եւ դրանից բխող հետեւանքների պահպանման պայմանով։

Գ. Կաթողիկոսարանի ներկայացրած ծրագրից բոլոր աշխարհիկ եւ հանրակրթական առարկաները հանել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 6։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 30
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №20

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 2/VI-1926 թ.

Լսեցին՝

3. Արտասահմանյան եկեղեցական կտակների մասին (Համբարձումյան)։

Որոշեցին՝

Առաջարկել հանձնաժողովին՝ Ար. Երզնկյան, Հ. Դուրգերյան[41] եւ Ժ. Միրզախանյան կազմով, արտասահմանյան եկեղեցական սեփականությունների եւ կտակների հարցի վերաբերյալ Մոսկվայում Անդրներկայացուցիչ Տեր-Գաբրիելյանին[42] զեկուցագիր ներկայացնել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 30։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

---

[41] Դուրգարյան Հովհաննես (1885–1937)։ *Քահանայի որդի։ 1925–1927 թթ. ՀԽՍՀ ՆԳԺԿ ժողկոմ, ապա՝ խորհրդային պաշտոնների։ Բռնադատվել է, գնդակահարվել։*

[42] Տեր-Գաբրիելյան Սահակ (1886–1937)։ *1920 թ. վերջից՝ լիազոր ներկայացուցիչ Մոսկվայում, 1928–1935 թթ.՝ ՀԽՍՀ ԺԿԽ նախագահ։ Սպանվել է Անդրկովկասի ղեկավար Լ. Բերիայի կողմից։*

ԹԻՎ 31
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №26

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 14/VII-1926 թ.

Լսեցին՝

8. Էջմիածնի վանքի գանձերի մասին։

Որոշեցին՝

1. Ընդունել, որ Էջմ[իածնի] վանքի բոլոր գանձերը, որ պահպանվել են պատերազմի ժամանակ Մոսկվայում ժամանակին հրապարակված դեկրետի ուժով[43], պետության սեփականություն են։

2. Ընտրել հանձնաժողով՝ Ա. Իոանիսյան, Ա. Մռավյան եւ Ա. Կարինյան կազմով, ազգայնացված գանձերի կազմից Էջմ[իածնի] Վանքին ժամանակավոր օգտագործման համար տրվող կրոնական պաշտամունքի, ինչպես նաեւ՝ սպասք, զգեստներ եւ այլ եկեղեցական առարկաների առանձնացման համար, որ պատմահնագիտական եւ գրական-արտադրական տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 60ա։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 32
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №32

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 31/VIII-[19]26 թ.

Լսեցին՝

2. Էջմիածնի գործերը (Ա. Երզնկյան)։

Որոշեցին՝

Ա. Բավարարել մինչեւ 1927 թ. հունվարի 1-ը եկեղեցական համայնքների գրանցման ժամկետների երկարացման մասին կաթողիկոսարանի խնդրանքը,

Բ. Համաեկեղեցական համագումարի հրավիրումը հետաձգել մինչեւ համայնքների իրավաբանական ձեւակերպումը,

Գ. Հանձնարարել Ար. Երզնկյանին բանակցել կաթողիկոսարանի հետ համաշխարհային պատերազմի զոհերի օրվա (ապրիլի 24) տոնման լուծարման անհրաժեշտության մասին[44]։

---

[43] *1914 թ. տեղափոխված, ապա՝ Ալ. Մյասնիկյանի ջանքերով վերադարձված գանձերը եւ ձեռագրերը։*

[44] *Բնագրում այդպես էլ գրված է.* «о необходимости упразднения празднования дня жертв мировой войны (24 апреля)»։ *Բանակցություններն անարդյունք են եղել։*

Դ. Ա. Երզնկյանի խնդրանքն իրեն կաթողիկոսարանին կից ժկխ ներկայացուցչի պարտականություններից ազատելու մասին ժամանակավոր հետաձգել։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 72։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 33
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №50

Հայաստանի կ(բ)կ կկ Նախագահության նիստի, 1/II-[19]27 թ.

Լսեցին՝

2. Եկեղեցական համայնքների գրանցման հետ կապված հարցեր (Դուրգերյան)։

Որոշեցին՝

Ա. ժկխ ներկայացուցչի եւ ՆԳԺԿ[45] միջոցով առաջարկել էջմիածնի միաբանությանը գրանցվել այլ եկեղեցական համայնքների հետ ընդհանուր հիմունքներով։

Բ. Երկարացնել գրանցման ժամկետը մինչեւ ս. թ. ապրիլի 1-ը, համարելով այդ ժամկետը վերջնական։

Գ. Մահմեդական համայնքների գրանցումն իրականացնել Հայ-Գրիգորյանների գրանցումից հետո, հանձնարարելով ՆԳԺԿ-ին նախապես Ադրբեջանի ՆԳԺԿ ստանալ այդ մասին տեղեկատվություն։

Դ. ԿԿ-ին կից կազմակերպել մշտական հանձնաժողով եկեղեցական եւ հակակրոնական հարցերով՝ Աշ. Իոանիսյան (գումարումը)[46], Ա. Շահսուվարյան, Հ. Դուրգերյան, Ա. Երզնկյան եւ Ս. Մելիք-Օսիպով, կազմով։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 28, թ. 8։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 34
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №34

Հայաստանի կ(բ)կ կկ Քարտուղարության նիստի, 24/II-[19]27 թ.

Լսեցին՝

2. Հակակրոնական եւ հոգեւորականության հարցերով կկ հանձնաժողովի որոշման հաստատումը (Մ[ելիք]-Օսիպով)։

---

[45] Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ — *ուներ ավելի լայն լիազորություն, քան զուտ միլիցիան։*

[46] *Գումարումն այսուհետ հասկանալ որպես նախագահ, որ իրավասու էր հանձնաժողովի նիստ գումարել։*

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ընդունել հանձնաժողովի հետեւյալ առաջարկները.

Ա) Փաստել, որ եկեղեցու նկատմամբ մեր քաղաքականության եւ եկեղեցական համայնքների գրանցման մասին մեր հրատարակած կանոնադրության պարզաբանման ուղղությամբ բավարար աշխատանք (գրավոր եւ բանավոր) չի իրականացվել, ինչի արդյունքում եկեղեցական համայնքների գրանցման գործընթացն երբեմն որոշ վայրերում հակա-խորհրդային տարրերի՝ հոգեւորականության, կուլակության եւ դաշնակների, կողմից օգտագործվել է սադրիչ նպատակներով։

Բ) Մատնանշել տեղական կուս[ակցական] եւ խորհրդ[ային] մարմիններին, որ ե[կեղեցական]/համայնքների գրանցումը պետք է տեղի ունենա կամավոր եւ բացառապես հավատացյալների նախաձեռնությամբ։

Նրանց ուշադրությունը հրավիրել ե[կեղեցական]/համայնքների գրանցման իրականացման անթույլատրելիության վրա՝ արտահայտված այս կամ այլ ձեւով կուս[ակցական] եւ խորհրդ[ային] մարմինների, ինչպես նաեւ կոմկուսի եւ կոմերիտմիության առանձին անդամների նախաձեռնությամբ։ Վերջիններիս դերը պետք է սահմանափակվի բացառապես միայն եկեղեցու եւ եկեղեցական համայնքների գրանցման մասին կանոնակարգի նկատմամբ մեր քաղաքականության սկզբունքային պարզաբանման իրականացմամբ, հավասարապես՝ եւ կոնկրետ տեղեկանքների եւ ցուցումների տրմամբ այն դեպքերում, երբ հավատացյալները կամ եկեղեցական համայնքների ներկայացուցիչները դիմում են պարզաբանման համար, կամ երբ գրանցման առթիվ հակա-խորհրդային տարրերի կողմից նշմարվում են սադրիչ ելույթներ։

Գ) Հանձնարարել Լուսժկ-ին եւ կկ ԱՔԲ-ին[47] հարցի շուրջ համապատասխան պարզաբանումներ ներկայացնել, ինչպես նաեւ հետեւել, որպեսզի մամուլի էջերում տեղադրվեն համապատասխան հոդվածներ եւ անհրաժեշտության դեպքում նշել խորհրդ[ային] եւ կուս[ակցական] մարմինների ներկայացուցիչների, հավասարապես՝ կոմկուսի եւ կոմերիտմիության առանձին անդամների ոչ-ճիշտ գործողությունները։

Դ) Մամուլի էջերում մերկացնել դաշնակների կապը հոգեւորականության ներկայացուցիչների հետ, ինչպես նաեւ նշել ե[կեղեցական]/հա-

[47] *Քարոզչության բաժին։*

մայնքների գրանցման հողի վրա հակա-խորհրդային տարրերի ելույթների առանձին դեպքերը։

ե) Առաջարկել Հողժկ-ին[48] ուսումնասիրել հոգեւոր անձանց հողակտորներից զրկելու հնարավորության հարցը՝ դրանց անհող փախստականների փոխանցելու առարկայի շուրջ։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 33, թ. 17։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 35

Հավելված ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության №54 նիստի արձ. 19 կետի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2[49]

ԿԿ Հակակրոնական հանձնաժողովի նիստի[50], 4/VI-[19]27 թ.

Լսեցին՝

1. Չգրանցված եկեղեցիների եւ հասարակական նպատակների համար նրանց գույքերի օգտագործման մասին (ՀԿ(բ)Կ Դիլգավկոմի[51] որոշում)։

Որոշեցին՝

Ա. Համարել ոչ-նպատակահարմար այն եկեղեցիների խլումը, որոնք դեռեւս գրանցված չեն, բայց որոնք փաստացի օգտագործվում են հավատացյալների կողմից։

Բ. Առաջարկել բոլոր գավկոմներին ԿԿ-ին ներկայացնել մինչ այժմ չգրանցված եւ փաստացի չօգտագործվող եկեղեցիների եւ աղոթատների ցուցակը։

2. Մեր եկեղեցական քաղաքականության շուրջ արտասահմանյան մամուլի սադրանքների մասին (Իոանիսյան)։

Որոշեցին՝

Ա. ԺԿԽ ներկայացուցչի միջոցով առաջարկել էջմիածնի կաթողիկոսարանին հրապարակել հերքում «Հառաջ»[52] թերթի կողմից տարածվող հրահանգի առթիվ՝ Հայաստանի խորհրդ[ային] իշխանության եկեղեցական քաղաքականության շուրջ։

---

[48] *Հողագործության ժողովրդական կոմիսար։*

[49] *Այս արձանագրությունը ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահությունը հաստատեց 1928 թ. հունիսի 21-ին։ Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 28, թ. 57։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուսերենից։*

[50] *Այս հանձնաժողովի այլ նիստերի արձանագրություններ չհայտնաբերվեցին։*

[51] *Դիլիջանի գավառային կոմիտե։*

[52] *«Յառաջ» օրաթերթ։ Փարիզ, խմբագիր՝ Շավարշ Միսաքյան, հրատարակվում է 1925-ից։*

Բ. Հանձնարարել Դուրգերյանին տպագրել տա «Խորհրդային Հայաստան»-ում սադրիչ լուրերը հերքող հոդվածներ։

3. Հկ(բ)կ էջմիածնի գավկոմի որոշումը վանքապատկան հողերի բռնագրավման մասին։

Որոշեցին՝

Հարցադրումը համարել վաղաժամկետ, թողնել ուժի մեջ նշյալ հարցի մասին հին որոշումը։

Նախագահ՝ Իոանիսյան [անստորագիր]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 28, թ. 59։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 36
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 13/I-1928 թ.

Լսեցին՝

7. Հոգեւորական Տեր Հարություն Տեր-Հարությունյանի սպանության գործը[53] (Մ[ելիք]-Օսիպով)։

Որոշեցին՝

Ա) Համաձայնվել ՊՔՎ-ի[54] եւ Արդարադատժկ-ի[55] առաջարկությունների հետ տվյալ գործով դատական գործընթացի վարման աննպատակահարմարության մասին։

Բ) ՊՔՎ-ին առաջարկել սպանության մանրակիցների նկատմամբ խափանման միջոցի հարցը նախապես քննարկել կոլեգիայում եւ ներկայացնել նախագահության հաստատմանը[56]։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 2։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[53] *Սպանության հանգամանքներ պարզել չհաջողվեց։*

[54] Պետական հաղաթական վարչություն — *պետական անվտանգության մարմին (կոմիսարիատ)։*

[55] *Արդարադատության ժողովրդական կոմիսարիատ։*

[56] *Այս կետն առանձին, ըստ կոմկուսի գործավարական կարգի, որակավորվել է որպես «Հույժ գաղտնի — Հատուկ թղթապանակ» (*«Особая папка»*)։ Քաղվածքն ուղարկվել է ՊՔՎ եւ «Հատուկ թղթապանակ»։*